համար նահատակուած թաղում են այն վայելուչ տեղումը։

Այս նահատակին՝ չըջակայ գիւղացի բարեպաշտ ժողովուրդը՝ վանքը գալու միջոցին խունկ ու մոմով պատուում են։ Իսկ Ջամախեցիք միայն զուարճութեան համար գալով՝ ինչպէս քանիցս տեսի և իմացայ, որ ոմանք նախնական սովորութիւնից ստիպուած գալիս են մինչև Նահատակի մօտը և այնտեղ անտառի մէջ ոչխարը մորթելով և ուտելով և կեցցէներ կանչելով վերադառնում են Ջամախի, առանց տեսանելոյ գոնէ և ոչ համբուրելոյ փառաւոր վանքը՝ որ 50 քայլ հազիւ հեռու լինի Նահատակից, պատճառելով թէ «Լութերեաններն (նեստորական, բողոքական) ասում են մատաղ չ'կայ»։

Խեղճ ողորմելիքն չեն լսել ու սովորել, որ քրիստոնէութեան ժամանակից մատաղը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ողորմութեան մի տեսակը, որով վանքերը և աղքատները պէտք է շահուին։ Աւետարանի և նոր Կտակարանի քանի վկայութիւններն գրելով այստեղ, որ աղքատաց և սրբոց (եկեղեցւոյ պաշտօնէից) խնամատարութեան համար պատուէրներ են և հրահանգութիւն, հրաւիրում եմ յարգոյ Ջամախեցւոց, որ կարդան և իմանան թէ Քրիստոսի և առաքելոց խօսքերը ինչպէս պէտք կատարել, որպէս դէպքը բերած միջոցին՝ եկեղեցւոյ և ուսումնարանի մէջ քանիցս բացատրել եմ և յիշեցրել եմ պարտքերը զէպի իրենց որդիքը և ընտանիքը, զէպի եկեղեցին և դպրոցը, զէպի աղքատները և կարօտները, վերջապէս զէպի ազգը և ազգային հաստատութիւնքն, որ կուրօրէն չը հետևին խարեբայ նեստորականներին և հետևան հայրենի եկեղեցիք ու բարեպաշտ ատենդութիւններից, որք հիմնուածն են սուրբ գրքի վկայութեանց վերայ. որք են հետևեալքն։

Մատ. ժ. 10 ժ.41։ Մարկոսի ժբ.41։ Ղուկասու բ. 3. ժբ 22. խ. 1։ Հռոմ. ժբ. 13 ժե. 25։ Եբրայ. ժդ.7.17. Զ. 10։ ա. Կորն. Թ. 11. 13. 14։ Յակոբ բ. 5։

Վանքի պարսպի մէջ և դուրսը կան թէև զերեզմաններ և խաչքարեր, բայց նշանաւոր և պատմութեան նիւթ տուող արձանագրեր չունին, մի քանիսի վերայ միայն հազիւ կարդացվում են յատուկ անուններ և թուականք, որոնցից քաղել եմ ոմանց առաջնորդաց (նոյն և վանահարց 'ի հնումն) անունները։